

ՀԱՅՔ

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAİK

AN ARMENIAN MONTHLY JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D.

341 West, 23st St., New York, N. Y.

Vol. VI, 1896.

ԲՈՎՆԵԴԵԿՈՒԹԻՒՆ

Երկու ծայր.— Նամակք Կ. Պոլսէ.— Նամակ Պուլկարիայէ.— Նամակ Խարբերդէ.— Նամակ Վանէն.— Նամակ Ակոնէն.— Նամակ Այնթապէն.— Հաշիւ Ամերիկայում եղած հաճախակութեանց ի նպաստ Հայաստանի — Վիէննայի Միթթարեան Գալոցը և Հայերէն Լեզուն.— Այլևայլք:

ԵՐԿՈՒ ԾԱՅՐ

Նորագոյն տեղեկագրութիւնք կը պատկերեն Հայաստանի վիճակը համակ ուն: Պղտիկները խոտ կ'ուտեն՝ իբրեւ ոչխար, և մեծերը կուլան անօթի՝ իբրեւ սղաք: Կիլիկիայէն կը գրէ մեզի թղթակից մը թէ մօտաւոր ապագան ահաւոր կ'երեւի իրենց, վասն զի յուսահատ և հացկարօտ տաւապեղոց դաւուկ բազմութիւնը, հանգոյն աշնան տերեւներու, պիտի թօթափի պէսպէս արտերու աներեւոյթ հարուածներուն տակ, և աւելի մեծ թուով քան զկոտորեալներն: Ուրիշ քաղաքէ մը մեզ հասած տեղեկութիւնք կը ցուցնեն թէ անխառնութիւնը արեւել սկսած է ոչ

միայն Բուրդ զԹուրք, այլ և Թուրք ըզԹուրք կը կողոպտէ: Կեդրոնական իշխանութեան ազդեցութիւնը ու պատկառելիութիւնը օր ըստ օրէ և ամեն տեղ կը նուազին, ինչպէս պատմութենէ գիտենք թէ ամեն ատեն այդպէս եղած է երբ պետութեան մը հպատակներն իրարու դէմ պատերազմած են: Այդ պայմանաց մէջ մարդիկ քաղաքական և կրօնական կրից չըջանէն դիւրաւ կ'անցնին անձնական հաշիւներ մաքրելու, պարտատէրներ սպաննելու, հակառակորդներ մէջտեղէն վերցնելու, կողոպտելու և կրակ ձգելու, չարագործելու:

Մինչ կացութիւնը այսքան դառն և յուսահատական է, ինչ դարման կը մըտածեն հայ գործիչները:

Երկու ծայրայեղութիւն կայ այժմիկ ազգին մէջ: Մէկը յեղափոխական և միւսը պահպանողական, երկուքն ալ հաւասարապէս յիմարական: Յիմարական, այո՛, բայց ոչ նպատակաւ այլ մեթոտով:

Պահպանողականները վերակազմուած խմբակ մըն են, նուրեանի ղեկավարութեամբ, և իրենց նպատակն է ազգը փրկել, և միջոցը կամ մեթոտն է, ԻԶՄԻՐԼԵԱՆԻ տապալմանը աշխատիլ: Ո՛չ ապաքէն ԻԶՄԻՐԼԵԱՆԻ օրով տեղի ունեցան զարհուրելի կոտորածները, ուրեմն նա չէ կրցած զազգը պաշտպանել, և դարձեալ ուրեմն հարկ է զԻԶՄԻՐԼԵԱՆ զոհել և ազ-

զը յանձնել Համիտի Հայրական հովանա-
«որութեանը՝ անպայման հպատակու-
թեամբ: Այս խղճալի կամ անխիղճ յիմար-
ները որ կը կազմեն զնուրեան խմբակը,
են, որպէս Կ. Պոլսէն կը ծանուցանեն «Մը-
շակին», Դիմաքսեան և Բարթուղիմէոս ե-
պիսկոպոսները, Մկրեան քահանայն, Վա-
հան վարդապետ Տէր Մինասեան, և ծակա-
մուտն Աշքեան, սեւ գլուխն նորէն դուրս
հանած: Իսկ աշխարհականներէն՝ Մեր-
եմ-Գուլի, Կարապետ Փանոսեան, (Ման-
զումէի ցնորեալ խմբագիրը,) Անտոն Կէօ-
չէ Օղլու և Գրիգոր Գարակէօզեան:

Գալով յայտնի յեղափոխականներուն,
անոնք երկու գլխաւոր խմբերու բաժ-
նուած են. Հնչակեան և Դաշնակցական:
Երկուքն ալ ընկերվարականութիւն կը
դաւանին (զոնէ պետերը): Երկուքն ալ
յեղափոխութիւնը անմիջական նպատակ
ընտրած են. երկուքն ալ օգտակար ոճիւ-
րներու օրինաւորութիւնն կ'ընդունին. — և
թէպէտ նպատակով ու եղանակով այդ
աստիճան համամիտ կ'երեւին, դարձեալ
թագուն կամ անխոստովանելի պատճառ-
ներով իրարու հետ անմիաբան են և եր-
բեմն կը հարուածեն ալ մէկ զմէկ: Դաշ-
նակցականները վերջերս աւելի կարեւո-
րութիւն ստացան իբրեւ նուազ քան զՀն-
չակեանները բաց-բերան և ցուցամուլ և յա-
խուռն, կամ թէ, գոնէ, նուազ փորձուած:
Դոցա գործունէութեան մասնաւոր կեդ-
րոնը Վանի կողմերն է, կ'ասէին, և ահա
իրենց «պատկառելի ուժին և խոհական
չըջահայեցութեանը» հակառակ, թէ ի-
շենց անբաւական ուժին և պակասաւոր
չըջահայեցութեանը շնորհիւ, զայդ վճռել
չենք կարող, եղաւ ջարդ մը Վանի մէջ
ալ, որ ցարդ խնայուած էր, և Վանայ չը-
ջակայքը 40 դիւղեր քանդուեցան և իբր
12,800 հոգիք կոտորեցան: Ցաւալի է տես-
նել որ հեռագրերը կը ծանուցանեն աշ-
խարհի թէ այդ կոտորածներուն առիթ
տուած են Վանայ մէջ գտնուող յեղափո-
խականներն, և նիւ Եորթի INDEPENDENT
շարաթաթերթը վճռապէս կ'ասէ, Վանէն
իրեն ուղղուած նամակներու կռթնած, թէ
«Այս հազարաւորներուն արիւնը ըստ մե-
ծի մասին պէտք է հանգչի հայ ազետա-
բեր յեղափոխականաց գլուխներուն վրայ»:

Մենք չենք կրնար այդ վճիռն ընդու-
նիլ՝ առանց հաստատուն ապացոյցութեան:
Բայց սաշափը կը զգանք թէ ազգին այս

ճգնաժամուն մէջ ազգային հոգերը և ցա-
ւոց դարմանը աւելի կարող ձեռքերու
պէտք է հնարիլ յանձնել: Բարիզի մէջ
պէտք է կազմաւորել հայկական կեդրոն
մը, եթէ հնար է՝ Նուար ֆաշայի նման
անձնաւորութիւններէ, որպէս տարիներէ
ի վեր կ'աղաղակենք: Մեր Պուլկարական
թղթակիցն ալ զնոյնը կը ջատագովէ, որոյ
մէկ նամակը կը հրատարակենք այս ան-
գամ: Բայց մինչ առ այս աշխատիլ պէտք
է, չմոռնանք թէ Սրբազան ԻԶՄԻՐ-
ԼԵՍՆ Պատրիարք Հայրն միակ միջնասո-
ման, այսինքն երկու ծայրայեղութիւններէ
հաւասարապէս հեռու՝ դիրք ունեցող գոր-
ծիչն է այսօր ազգին մէջ, և անոր տա-
պալմանը աշխատող խմբակը ազգին մեծ
չարիք մը գործելու զբաղած է: Սր. ԻԶ-
ՄԻՐԼԵՍՆ, որ վիրաւից ազգին նախախնա-
մական միտքարիչն է, կրնայ կրկնել իւր
անխիղճ հակառակորդներուն ինչ որ մե-
ծահոգին Լ'Օբիդալ, Փռանսայի ներքին
պատերազմներու և պառակտմանց պա-
հուն ասաւ, ցուցնելով իւր ճերմակ մօ-
րուքը. «Երբ այս ձիւնը հալի, ցեխ միայն
պիտի ունենաք»:

Իրաւ, այս մեծ Պատրիարքին հրաժա-
րումը կրնայ ազգային բոլորական կազմա-
լուծութեան սկզբնաւորութիւնը լինիլ:
Տէ՛րը ողորմի մեր ազգին:

ՆԵՄՐԵԿ Կ. ՊՈԼՍԷՆ

(Մեր յատուկ թղթակցէն)

Կ. Պոլիս, 16 Յունիս 1896

Ի նպաստ կողոպտեալ Հայոց տեղի
ունեցած ազգային և օտար հանգանակու-
թիւնք վերջ գտան. գաւառներէ նօթու-
թեան աղաղակներ և կոան հասնիլ ի Պատ-
րիարքարան Հայոց. անկարելի է կարգալ
հաց խնդրելու նպատակաւ գրուած նա-
մակներն ու չլալ: Պատրիարք Հայրն չու-
արած է: Անդդիւր և Ամերիկայի մէջ հան-
գանակեալ նպաստից գումարն հազիւ
հանգած է 85,000 ոսկւոյ, Պատրիարքարա-
նի բացած հանգանակութիւնն 21000 ոսկւ-
ոյ կը հասնի: Ինչ են այս գումարներն
ահագին պէտքին առջեւ: Պատրիարքարա-
նի մէջ եղած հաշիւներն կը ցուցնեն թէ
քաղաքացի արհեստաւորին գործիք, զիւ-

յացի երկրագործին սերմ և աշխատութեան կենդանի տալու համար հարկեր հազար ոսկւոյ պէտք մը կայ, թող սնունդեան և բնակութեան համար պէտքերն: Եթէ իրաց ներկայ վիճակին մեծ դարմաններ չհասնին՝ յառաջիկայ աշնան և ձմեռան ողջ մնացող Հայերն ալ կը փճանան, և ըստ Համիտի փափաքանաց Հայ տարրն ջնջուած կ'ըլլայ և Հայաստանն կը լինի Քիւրդիստան կամ Թրքաստան:

Պատրիարքարանի պատրաստած թուահամարներն կը ցուցնեն ջարդերու առթիւ 70,000 սպանեալ, 10,000 վիրաւոր և 45,000 թրքացած:

Շատ տեղեր իսլամութիւն ընդունողներն սկսած էին դառնալ իրենց փաղեմի կրօնին, սակայն սոցա մասին տեղի ունեցած ջարդերն՝ վերջ տուին դարձից:

Պատրիարքարանն վերջերս ծանոյց Դրան թէ Քաղաքական և Կրօնական Ժողովոց շրջանն աւարտած է, ուստի հարկ է ընդհանուր ժողով գումարելով նորոգ ընտրութեանց ձեռնարկել, և վաւերացնել Սոյ կաթողիկոսի ընտրութիւնն: Դուռն պատասխան իսկ տուած չէ. և կը լսուի թէ՝ Քաղաքական ժողովոյ կազմութիւնն Դուռն պիտի կատարէ Հայ պաշտօնեաներէ. իսկ կրօնական ժողովոյ ընտրութեան հոգն Պատրիարք Հօր պիտի թողու: Այս կարգի իսկ առաջարկ մը նոյն իսկ Սահմանադրութեան հաստատութեանէն առաջ տեղի ունեցած չէ:

Սահմանադրութեան տարեդարձի հանդէս չկատարուեցաւ և ոչ ուրեք, և նոյն իսկ հրահանգ կար առ այս Դրան և Պատրիարք Սրբազանի կողմանէ:

Յունիս 3ին հեռագրատանց բոլոր Հայ պաշտօնեայք ոստիկանութեան դուռն կանչուեցան. յանդիմանութիւն լսեցին գաղտնի հեռագիրներու լուրը դուրս հանելուն համար. մի քանիներ բանտարկեցին, միւսներն արձակեցին:

Գոմիսէն Մարգարի սպանչին Մայր եկեղեցիի մէջ ապաստանումն մատնողն եղած է նոյն եկեղեցւոյ երբեմն լուսարար վատ հայազգի մը: Այս մատնիչն ոստիկանութեան կողմանէ վարձքն ստացաւ և նոյն իսկ խոտուում եղաւ նշան և ամսական ընդունելու եթէ նմանօրինակ ծառայութիւններ մատուցանէ կառավարութեան: Մեր մատնիչն պարգեւէն և խոստումներէն քաջալերեալ մայր եկեղեցւոյ

շուրջն կը դեգերէր պարծենալով: Յունիս 8ի երեկոյեան ժամ 11ին (ը.թ.) ատեննեւրըն՝ քաջարի Թէքիրտաղցիէ մը ընդունեց երեք դաշոյնի հարուած. սպաննիչն փախաւ տուն մը՝ ուր գտնուող կիներն սարսափահար կը սկսին լալ ու ճչել. մէկ քառորդ վերջն միայն ոստիկանութիւնն այդ աղագակներէն կասկածեալ հետքն կը գտնէ. վրէժխնդիր Հայն տունէն դուրս ելնելով կը ճակատի ոստիկանաց խմբին դէմ, իւր ատրճանակաւ նոցա սարսափ կ'ազդէ, և ապա կրակ ընել փորձելով ատրճանակն կը վրիպի, ասկից քաջալերեալ ոստիկաններն կրակ կ'ընեն, խեղճն կը վիրաւորի, կը փորձէ դաշոյնով յարձակիլ՝ սակայն գետին կ'իյնայ, հարիւրաւոր ոստիկաններ կ'սկսին գանակոծել, քաջ վրէժխնդիրն կը մեռնի: Վայրենիներն մեռեալ դիակի ոտքէն չուան մը անցնելով կը քաշեն կը տանին: Ի տես սորա մոլեռանդ թուրքերն կը քաջալերուին և կը գրգռուին, նոյն գիշերն իսկ կը պաշարեն Սամաթիան և կամին կրակ ձգելով փախչողներն սպաննել, ոստիկանութիւնն առաջքն կ'առնու: Այն օրէն ի վեր քանիցս նոյնն փորձեցին թուրքերն և միշտ առաջքն առնուեցաւ. Հայք սարսափի մէջ են: Մատնիչն կը դարմանուի:

Երեկ գիշեր երկու Հայեր կախուեցան մին կալաթիոյ կամուրջի գլուխն՝ իսկ միւսն Կէտիկ փաշայի վերն (թաւուք փաղար), իբր թէ սոքա են Շահպազի խընդրոյն առթիւ խալիլն սպաննողներն. մինչդեռ ամեն ոք գիտէ թէ այդ սպանման հեղինակներն հեռի են թուրքիայէն:

Երէկ գիշեր Բանկալթի 22 հայ տուններ այրեցան: Զրհանկիրներու և հրաշէջ խմբերու կեդրոնին այնչափ մօտ Բանկալթիի պէս տեղ մը 22 տուն անհաւատալի կը թուի, սակայն իրողութիւն մ'է, որոյ մասին բացատրութիւն տալն իսկ աւելորդ է:

Աւելորդ է իսկ գրել Կրետէի, Յունաստանի և Ալպանիոյ խնդրոց մասին: Յոյք որ կը ծիծաղէին Հայոցս վրայ, և կոտորածոց մասին քաղաքավարական գուլթ մ'իսկ չէին ցոյց տար և թուրքերն արդարացի կը համարէին, այժմ լսելով իրենց Կրետէցի արիւնակցաց կոտորածներն կը յուզուին և Հայոց վիճակակից կը համարին ինքզինքնին:

Տեղացի Յոյներն գրգռեալ են իրենց

թրքամու Պատրիարքի, Հէլէն իշխանութեան և Թրքաց զէմ միանգամայն:

Յունաստանի հիւսիսարևմտեան ափամասերը կախմբեր կազմուած են, որք սահմանադրութիւն անցնելով թուրք զիւղերն կ'ապրատակեն:

Յունիս 11ին Վալիաէ Խանի Պատրիարքներն իրենց նորընտիր թագաւորի գահակալութեան հանդէսին առթիւ թուրք նուագածուններն վաճառած են, Համիաիէ քայլերգն նուագել փորձելուն համար: Պատուէր կայ նուագածուաց միշտ այդ քայլերգով սկսիլ նուագածութիւններն:

Օգտիրոսութեան համար եւալովա գտնուող Մատամ Օղիէն Պալատան մանկաբարձն և Օր. Բարդամեան յոյն խումբի մը կողմանէ լեռը տարուեցան 9 օրեր առաջ: Աւագահներն իւրաքանչիւրէն տասն հազարական սակի կը պահանջեն: Բարդամեան հազար սակիով գնաց սակայն չյաջողեցաւ փրկել իւր աղջիկն: Կ'ըսուի թէ պահանջեալ գումարն Սուլթանն պիտի վճարէ:

* *

Կ. Պոլիս, 6 Յուլիս, 1896

Կախման պատիժն ալ սովորական պատահարներու կարգին անցաւ աստ: Եղիա Շահապզի խնդրոյն առթիւ առաջին երկու կախուողներն, որոց մասին գրած եմ, մեծ սարսափ ազդեցին ժողովրդեան, մանաւանդ զի անմեղներ էին նոքա. ոոցա յաջորդողներ թէպէտ ոչ սուրբ մեղուոր, չին ներգործեր միւսնայն ազդեցութիւնն: Հոգեբաններու կը թողում մեկնութիւնն մեր սրտերու կարծրացման և զգացմանց բթութեան: Յունիս 24ին Պոլսոյ կամուրջի գլուխն կախեցին մատնիչ Սենեքերիմն սպաննած ըլլալու ամբաստանեալն: Յունիս մէկին նոյն տեղն Գալուստ Ասատուրեանն՝ իբր սպաննիչ մատնիչ Համբարձումին: Այս վերջինս կախաղան ելած ատեն յայտարարեց թէ այդ զէպքի մէջ բոլորովին անմեղ է, սակայն քանի որ բարբարոս Թրքաց համար զոհ մը պէտք է, ինքն թող լինի այդ զոհն, և օգտին անձամբ անցուցած է վիզն: Սորա դատաւարութեան ներկայ գտնուող իրաւագէտ մը կ'ըսէր թէ «մէկ վկայ իսկ չկար Գալուստ Ասատուրեանի ոճրի հեղինակ լինելուն, սակայն ստիպեալ լինելով անպատճառ ոճ-

րագործ մը գտնել, այդ անմեղին վրայ բեռցան ոճրի հեղինակութիւնը»: Քաղաքակիրթ աշխարհի մէջ կախման պատժոյն ենթարկեալի մարմինն առաւօտուն կանուխ կ'իջեցնեն, իսկ մեր բարբարոսներն երկար ատեն կը թողուն ի տես: Վերջնոյն գիտին միաց մինչ առաւօտեան ժամ 10 (ը. Ե.):

Կ'ըսուի թէ կայ դեռ կախուողներու շարք մը յորոյ շարքին մի երկու պիտի կախեն: Այս կախուելիք խմբին կախման որոշումն տրուած է նախարարաց խորհրդոյն մէջ, նազիմ ընդդիմացած է, սակայն չէ յաջողած որոշումն բեկանել, Սուլթանն վաւերացուցած է սիրայօժար:

Կ. Պոլսոյ մէջ անմեղներն կախելով կը գոհանան առ այժմ, դաւառաց մէջ այսպիսի փոքր զոհերն նշանակութիւն չունին. անդ ջարդերն կը շարունակեն: Անշուշտ իմացաք Վանայ և մանաւանդ իւր չըջախայ գիւղօրէից որոտածիկ ջարդն: Արժանահաւատ աղբիւրներէ առնուած տեղեկութեանց նայելով հարկւարաւոր գիւղերու հետքն իսկ թողած չեն: Վանայ կուսակալն և իւր օգնական, Մեւլիթեան, Պոլիս կուգան, արկածից մասին բացատրութիւն տալու համար...: Նորընտիր կուսակալն Շէմաէտալին Պէյ իւր գործի գլուխն անցած է: Իբր թէ Վանայ ջարդն զրգուցք հայք եղած են:

Նիկիտարի մէջ Հայք 40 անձի կորուստ ունեցած են ըստ ոմանց: Փոքր զէպքեր պատահած են ի Թուրքի, Սիվալ և այլուր:

Պրուսայի նախարդ կուսակալն՝ որ այնչափ աշխատեցաւ իւր նահանգի մէջ ունէջարդ ու խռովութիւն չպատահելու համար վերջապէս հրաժարուեցաւ և իրեն յաջորդեց Զէհնի փաշայ, որ հաւանականաբար չպիտի ընդդիմանայ իւր Վեհապետին հրամանաց, ուստի և ի մօտոյ անդ ևս կոտորածի կը սպասուի:

Սիւրիոյ մէջ ալ յուզումներ կան. կ'երեւի թէ Սիւրիոյ իսլամներն Տիւրքիներէ կրած հարուածի վրէժն քրիստոնեաներէ առնել կը փորձեն:

Մակեդոնիա և Ալպանիա յուզման մէջ են. Պուլխարաց և Սերպերու միջև մերձեցում մը կայ, հաւանականաբար միութեամբ պիտի գործեն իրենց դրացի ժողովրդեան ազատութեան համար: Սուլթանն՝ տեսնելով իւր այնչափ պատուած

Պուլկարիոյ իշխանին իւր ժողովրդեան զգացմանց յարումն՝ բակացած է նորա դէմ և վերջերս իշխանին աստ ի վաճառ դրուած բոլոր պատկերներն ժողովել տրուաւ. այժմ այդ պատկերն ունենալն ալ յանցանք մ'է:

Կրեւէցիներն հանդարտեցնելու համար Սուլթանն տեղւոյն նորընտիր կուսակալ Ճորճի փաշային միջոցաւ շատ մը խոտուսներ ըրած է. այլ ի զուր, Կրեւէցիք առաջին առիթն չպիտի կորսնցնեն իրենց Սուլթ գործն շարունակելու համար: Կրեւէցիք սրամտած են եւրոպացւոց անտարբերութեան և մանաւանդ իրենց արեւուկից Յունաց յօգնութիւն չհասնելուն: Հելլէն կառավարութիւնն ժողովրդեան ճնշումէն ազդուելով՝ սրտէր են վերջապէս առաջին պատեհութեամբ նպաստել Կրեւէցւոց և առ այս կը պատրաստուին:

Համարիէյի հեծեալազօրաց գունդ մը Պոլիս կը բերուի. ըստ ուսանց աստ պիտի մնան և ի հարկին ջարդի մը պիտի ծառայեն, ըստ այլոց Մակեդոնիս պիտի զրկուին անդ ևս ցոյց տալու իրենց արիւն-արբու շարութիւնն:

Ձերբակալութիւնք սաստկացած են, ամեն օր հարիւրաւոր Հայեր կը տանին, մանաւանդ գաւառացիներէն, սոցա ուսանց համար պատասխանատուներ առնելով ազատ կը թողուն, զայլս իրենց հայրենիքն կը զրկեն բռնի առանց ի նկատի առնելու աստ ունեցած զբաղումներն, ուրիշներ, վերջապէս կը բանտարկեն և խիստ հարցաքննութեանց կենթարկեն: Տեղւոյս ընդարձակ բանտերն Հայերով լեցուած են, տեղ չմնալուն՝ այժմ սկսած ե՛ր Պին Պիր Տիրէյի գեանափորներն լեցնել, ուր այս տաք օրերուն ողջ մնալ հրաշք մ'է:

Պատրիարք Հօր հրաժարականն ձեռք բերելու համար ամենայնիւ կ'աշխատին Դուռն և իւր գործակաւաւարաց խմբերն: Առ այս Հայ գործակաւաւարք երկու խումբ ունին մին ի Բերայ և միւսն ի Մազրիգիւղ: Կարելի է որ ի մօտայ Պատրիարք Սրբազանն ամենախիստ բողոքագիր մը տայ և քաջուի գործէ: Հաւանականաբար Պատրիարք Սրբազան գործէ քաջուելուն, կառավարութիւնն զայն աքսոր պիտի զրկէ երեսուղէմ:

ԾՈՒՎ

ՆԱՄԱԿ ՊՈԻԼԿԱՐԻՍՅԷՆ

Սիւիստրէ, Յունիս 15, 1896

Մեծ-խմբագիր ՀԱՅԲԻ, ի Նիւ Եւրք:

ՅԱքիա աքսորանքէ ազատուելէս յետոյ՝ պատեհութիւն ունեցայ աստ գալ և, բարեբաղդաբար, ընթեռնուլ Ձեր թերթից եռամեայ հաւաքածոյն: Արդարեւ համաձայն դուայ ձեր գրուածներ Հայաստանի՝ բուն երկրին բնական պահանջմանց: Կրնամ ասել վերջապէս թէ փորձառու, երկրին ծանօթ Հայաստանցիի մտածման շնորհը կը կրէին յիշեալ արտադրութիւնք:

Նամակիս նպատակն է՝ կեդրոնացման վրայօք գրել, կամ նորա վրայօք գաղափար մը յայտնել Ձեզ: Աւելորդ պիտի լինի, սակայն, աստանօր կրկնել կեդրոնացման օգտակարութիւնը Հայաստանի ազատութեան համար, եթէ յուրջ կերպով մտածուէր...

Հարստահարութիւնը ժողովրդեան մտքին մէջ բնական պահանջ կ'անէ ձեռք բերելու յեղափոխութիւն և ազատութիւն. նորա կեանքի խնդիրն է այն: Հայաստանցին, ուրեմն, սրբան ալ ուսեալ չը լինի, աւելի հմուտ կրնայ լինիլ իւր կեանքին քան յիւրմէ հեռաբնակ օտար Հայն: Իւր կեանքի խնդիրը տարբեր ուսում մ'է: Ուստի և գործիչներու ընտրութիւնն յամենայն դէպս, պէտք է Հայաստանէն լինի. նոքա բնական առաջնորդներ, ղեկավարներ են Հայաստանի ներքին գործերը դէպ ի բարին և լաւն առաջնորդելու: Ահա այսպէս՝ կեդրոնը պէտք է բաղկացած լինի Հայաստանի զանազան գաւառներու կարող Հայերէն, նիւթականի և բարոյականի ահր՝ յօգուտ միութեան: Դժուարագոյն գործ մ'է, այսպէս, երկար փորձառութեամբ ճանչցուած կարող անձնաւորութիւններն որոշել գաւառներու մէջէն և զանոնք ի մի վայր բերել, կեդրոնացնել: առ այս պէտք պիտի լինի ամեն ջանք ի գործ դնել, որպէս զի 1—2 տարիէն կարելի լինի ձեռք բերուիլ այսպիսի անձնաւորութիւնք, միմիայն փորձառու, Հայ հրապարակին վրայ ծանօթ— Խրիմեանի պէս, օրինակի աղագաւ— Հայաստանցի անհատներու յանձնարարութեամբք: Այսպէս, գուցէ գործիչներն ալ յօժարին կարգ մը պայմաններու տակ, մանաւանդ

երբ տեսնեն, թէ լուրջ է առաջարկն և ընդհանուր տեսակետիւ ալ ազդօգուտ:

Հայքս պարտիմք փութալ և կազմել կեդրոնական յանձնախումբ մը: Սորա ղեկավարողք լինին Հայաբնակ երկիրներու ժողովրդեան թուին համաձայն ընտրեալ, 100,000ին մէկ մարդ առնլով, Մեհ և Փոքըր Հայաստանի, Ռուսաստանի, Պարսկաստանի և Եւրոպիոյ կարող Հայ անձնաւորութիւններէն: Արտաքին քաղաքականութեան ղեկավարողք լինին հանրածանօթ Հայազգի քաղաքագէտներէն— օրինակի համար, Նուպար Փաշա, Մեւքոն Խան, ևն.— որոց ներկայութիւնն կեդրոնին մէջ օգտակար է: Սոցա խորհրդականներն ալ լինին, Անգլիայէն, Ֆրանսայէն, Ռուսիայէն, Գերմանիայէն, Աւստրիայէն և Իտալիայէն կարող Հայ անձնաւորութիւնք: Այսպէս Հայքս մասամբ պիտի յարինք լաւագունին՝ ի պատեհ ժամուն, այսինքն, ռուսական քաղաքականութեան՝ երբ մեզ համար նպաստաւոր է: Անգլիականին երբ սա ևս մեզ համար նպաստաւոր է: Այս կերպով և ոչ միայն հետ անհաշտ պիտի գտնուէինք. ընդհակառակն, երկուքէն ալ պիտի օգտուինք: Այսպէս և մեք, որ ցայժմ ունեցած չէինք մեր ուրոյն քաղաքականութիւնը, պիտի գիտնանք և ունենանք զայն յայմհետէ, եթէ լրջօրէն փութանք կազմակերպել կեդրոնական յանձնախումբ մը:

Անշուշտ գծուարին կը լինի այս օրինակ կեդրոնացում մը կազմակերպել, սակայն մեզ համար միակ միջոց կրնայ լինիլ՝ այն է աշխատիլ ձեռք բերելու զայն, որով Հայքս վստահօրէն պիտի ընթանանք և ամենայն տեսակետիւ պիտի վստահինք նորա վրայ կատարելապէս: Ի հարկէ մեծ գծուարութեամբ պիտի համաձայնին կարող և Հեղինակաւոր Հայք առ այս, սակայն երբ տեսնեն թէ լուրջ կազմակերպութիւն է՝ վստահ եմ ասել յայնժամ, թէ պիտի յօժարին անշուշտ, երբ մանաւանդ ի նկատի առնեն ժամանակիս դէպքերն և տիրող անապահովութիւնն: Պաշտօնէից պիւտճէն նաև, ի հարկէ, բազմածախս պիտ լինի. զի սոքա յաւիտեան պիտի հրաժարին Հայաստանէ և գան արտասահման, ուր պիտի ստանան և ամսաթուղիք՝ զիրենք նիւթապէս ապահովելու կամ գոհացնելու համար ուտեստի կողմանէ, ըստ կարելոյն: Նախ քայլ առ

քայլ պիտի սկսուի, անշուշտ. վերոյիշեալ ձևը կատարելութեան վիճակն է, ինչ որ հետզհետէ պիտի ստանայ զայն:

Բարիք կազմուած է, լսեցի, Հայկական կեդրոնական Միութիւն մը, ինչ որ— ըստ ինձ— Ձեր առաջարկած, քարոզած կեդրոնին կեղծեալն է: ... Նաև աշխատիք զայն բաղձացեալ կեդրոնին վերածել, ձուլել, այժմու նորա հաւաքած ոյժերը ծախսելով կարող Հայ անձնաւորութիւններ ձեռք բերելու, մինչև որ իւր բաղձացեալ վիճակն առնու նոյն այն կեդրոնն:

Ողջւնելու Ձեզ անձնուէր,
ԿԱՐԱՊԵՏ ՆԱԹԱՆԵԱՆ

ՆԱՄԱԿ ԽԱՐԲԵՐԴԵՆ

(Խարբերդի ամբիկեան զօլէմիւ մախախազահին ուղղած է զնետեալն առ Հայախնամ Յանձնախումբն Նիւ Եորքի):

Երկու շաբաթ առաջ, ընկերակցութեամբ Տր. Հապըլի, Կարմիր Խաչեան, և Տիար Ֆինթոնայի, Բրիտանական փոխ-հիւպատոսի, այցելեցի գիւղերէն մէկ քանին:

Երկիւղ, անյուսուցիչ, անբութիւն: Մեք կը գրգռենք զիրենք որ չինեն, բայց չենք կրնար ընձեռել իրենց դրամ որ աւաղձ չեն: Կը յորդորենք որ իրենց արտերը հերկեն, սակայն չենք կարող նոցա Հայթայթել եղ կամ գոմէշ: Անցած աշնան ցանքը կը բուսնին առանց խնամքի, և գարնան վարուցան եղած չէ: Որքան որ մարդկային աչքը կը զօրէ տեսնել, անոնք որ այս ձմեռ մահէն պրծեցան պիտի մեռնին գալ ձմեռ՝ եթէ հաստատուն նւապստ մը չմատուցուի:

Այսօր ուրիշ գիւղ մը, զԲորէ, այցելեցի:

Առաջ իբր 150 տնուոր գիւղ մ'էր այն, այժմ թերեւս 15 կը մնայ. մնացածը ամբողջովին կործանուած է: միայն պատերը կը կենան վկայելու թէ որպիսի աղւորիկ գիւղ մ'էր այն երբեմն: Ցնցոտիներ հագած էին գիւղացիք: Բոլոր ձմեռն գետնախշտի եղած են, առանց վերմակի: Մարգագետնին վրայ ոչ ևս գառնք կան կայտուող, և ոչ արջառ ի դաշտի, Միայն մէկ կամ երկու գամբու է մնացեր: Տներուն մէջ ոչ զօրեն գտայ և ոչ ուտելիք: Մի

քանի տներու մէջ քիչ մը հաց կտար, ամեն տան մէջ փոքր խուրձեր կային խոտի, որ հիմակուան գլխաւոր սնունդն է: Տղոց և կանանց երեսներն վատած և դալուկ էին: Հարցայ պղծիկ տղու մը թէ այն օր հաց կերա՞ծ էր. «չէ՛» պատասխանեց, լոկ խոտ էր կերեր: Երբ գետինը նստանք, գիւղացւոց մեծ մասը մեր բոլորը, մանուկներէն ոմանք շարունակ խոտ կը քաղէին և կ'ուտէին արմատով հանդերձ:

Ժողովուրդը մեր առջեւ կ'ենէն գերեկցող գէմքով և կը հարցնեն «մեզի համար յոյս չկա՞յ»: Հարցումը ձեզի կը դարձնեմ: Մի՛ թուլցնէք մեզի նպաստ յղելու ձեր ջանքերը:

Երբեմն ամեն բան թողում և Կ. Պոլիս երթամ կ'ասեմ, անտի ալ Եւրոպա, որ փորձեմ ցուցնելու ժողովրդոց թէ ինչքան յուսահատական է վիճակը: Մի՛թէ ժամանակ չէ՞՞ այս ինդիւրը լրջօրէն ձեռք առնելու:

ԿԵՑԹՍ

ՆԱՄԱԿ ՎԱՆԷՆ

(Այս համակը, Յունիս 23ին Վանէն գրուած, հաղորդուած է առ Տէյլի նիւզ):

Խռովութիւնք մեծապէս շատցան ի ներկայութենէ հայ խմբերու Ռուսիայէն և սլաւոնաւորներէն, շատերը խաղախի նման տարազով: 15ին գորքեր վիրաւորուեցան, հաւանօրէն աղ փախցնող Բրդերէ: Այս միջագէպն ի պատրուակ ծառայեց յարձակելու Հայոց վրայ:

Յաջորդ դէօրն լուր եկաւ թէ Բըրդերը քաղաքին վրայ կուգային: Բրիտանական հիւպատոս Տիար Ուիլեմսն ջանաց բաւակցիլ պալմաններու վրայ որով օտար յեղափոխականներուն թող տրուէր մեկնիլ սահմանէն դուրս ելնելու, բայց չյաջողեցաւ յայտն վրան զի երկու կողմն ալ մերժեցին բանաւոր պալմանները և զի թրքական խոստմանց չէին վստահիր:

Ուրբաթ օրն Բրդերը մեծ բազմութեամբ քաղաքը բոլորէր էին: Միտինարաց շէնքերը կրկնելով և մանկաւով լեցուեցան նորէն: Կիրակի և երկուշաբթի մեծ ահ ու դողով անցան: Տներն բոլորովին անբնակ էին: 15,000 հոգիք բացօթեայ քնացան երկու գիշեր: 20ին յեղափո-

խականներ մեկնեցան քաղաքէն, և յայնժամ վալին զօրքով շրջապատեց Հայոց թաղերը Բրդերէն պաշտպանելու համար զայնս (՛): Նոյն ատեն Հայոց տներուն կըրակ կուտային Բրդերը:

Հարիւրաւորներ կուգան ի վան այրած գիւղերէն, անօթի, մերկ, անպատուար, և շատերն վիրաւորեալ: Կը տարակուսիմ թէ արդեօք անփնաս մնացած հայ գիւղ մնա՞ց. մեծ մասը բոլորովին քանդուած լինելու են:

ՆԱՄԱԿ ԱՎԱՆԷՆ

Ա. Կ. 22 Յունիս, 1896,

(Այնէն ուղեւոր մը գրած է մեզ հետեւալ տողերը):

Այս գիշեր ժամ հինգ ու կիսուն ընդոտ արթնցայ այն աղաղակէն որ կը գութէր թէ շուկան կ'այրի: Անմիջապէս հագուելով ընկերի մը հետ շուկայ սլացայ, արհամարհելով ոմանց կասկածները: Մինչև ուտու աշխատեցանք խանութները պարպելու: Իբր 20 խանութ և երկու տուն այրեցան: Կենաց կորուստ բնաւ չկայ, գոյքերն ալ աղատեցան առանց բացառութեան: Նոյն գիշերը քաղաքին վարի թաղըն ալ երկու տեղ կրակ ձգած էին, բայց շնորհիւ տան-տէրերու արթնութեանը՝ փորձերը անյաջող մնացին: Մէկ քաղաքի մէջ նոյն գիշերը երեք տարբեր կետերէ միանգամայն եթէ տարածուէր, կրակը պիտի լափէր քաղաքը և մնացած տնտեսական չնչին կարողութիւնը: Բայց շնորհիւ կայսերական զօրաց և իրենց հազարապետին ջանից՝ բազմութիւնը աշխատեցաւ կանոնաւորապէս: Նկատելու է թէ շուկայի խանութներն մեծ մասամբ թրքաց են և վրնասը գլխաւորապէս անոնց եղաւ և պիտի լինէր:

ՆԱՄԱԿ ԿԻԼԻԿԼՍՅԷՆ

Այնթապ, Յունիս 25, 1896

Նոր փաշայի պտուղներն դեռ չճանչուեցան: Առ այժմ թրքաց հետ խիստ կը վարուի և երևելիներուն երկիւղալի կը լինի իւր ազդու խրատներովը: Կը ծանուցանէ թէ ինքը Ղազը Օսման Փաշայի քննորդին է և կարող է ջախջախել իրեն անաստողները: Քսան կամ երեսուն հոգի

բանտարկուեցան քանի մը օր և արձակուեցան. մի քանին ծեծ կերած էին: Շատ մը տուներ խուզարկուեցան կողոպուտները գտնելու: Յանցաւոր թրքերէն ոմանք սկսան կողոպուտները այրել կամ դրացւոյ մը գաւիթը կամ փողոցը նետել գիշերով: Միւսիւմաններէն ոչ սակաւք բարկացած կը բողոքեն իբր թէ կառավարութեան կողմէ այսպիսի գործունէութիւն մը անհաւատարմութիւն է: Երեւելիներէն ոչ ոք պատիժ կրած է ցարդ: Ոմանք կը կարծեն թէ աւելի զօրք ապսպրուած է: Մինչ այսպէս, քաղաքը շատ մտատանջութեան մէջ է առերևոյթ հանդարտութեամբ հանդերձ:

Գոլէճին պատը քակելով ախոռին ձիերը տարին, ասոր վրայ կառավարութիւնը իւր սովորական քաջածանօթ արթնութիւնը ի գործ կը դնէ. ոստիկանութեան կողմէ չորս անգամ այցելութիւն եղաւ, և քակուած պատին բարձրութեան և թանձրութեան նկատմամբ հետաքրքրուելու չափ յառաջ մղեցին իրենց կորովի հոգածութիւնը:

Տագնապալի լուրեր կուգան Ատիեամանէն: Քաղաքին զօրքերը ուրիշ տեղ շրջուած լինելով՝ սպառնալիք կը լինի Բրիտոնէից: Բողոքականաց հովիւը յարձակում կրած է չուկայում:

ՀԱՇՆՈՒ

ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ ԵՂԱԾ ՀՍՆԳԱՆԱԿՈՒ-

ԹԵԱՆՑ Ի ՆՊԱՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Վերջին երեք ամիսներուն մէջ հանգանակութիւնները շատ դանդաղ կերպով կը շարունակուին այս երկրին մէջ: Հայոց խնդիրն իւր թարմութիւնը կորոյս և նախագահական ընտրութեան նախապատրաստական պայքարը դրաւած է ժողովրդի ուշն և ուրուշ:

Յայտնի է թէ նիւ Եորք քաղաքում երկու մարմին կայ հանգանակութեան աշխատող, մին կը կոչուի The National Armenian Relief Committee, Ազգային Հայկական Նպաստամատույց Յանձնախումբ, և մյուսն է The Armenian Relief Association Հայկական Նպաստամատույց Ընկերակցութիւն: Առաջնոյն հաշիւն հետեւեալն է.

Մինչև Յունիս 30, 1896, ամբողջական մուտք 100,126 տոլար 82 սէնթ.

	տ.	ս.
Յղուած է Կարմիր խաչի	71,128	87
Մր. Փիթի, Կ. Պոլիս	21,279	73
Նեղելոց յղուած համագումարը	92,408	60
Ծախք տպագրութեան, պաշտօնատեղւոյ, փոսթայի, ժողովներու և ամսաթոշակաց	4,920	30
Պատրաստ դրամ	2,797	92
	100,126	82

Այս Յանձնախումբի Պոսթոնեան ճիւղն ալ 37,353 տոլար հանգանակելով ուղղակի յղած է:

Գալով միւսին, Հայկական նպաստամատույց Ընկերակցութեան ելեմսից, կը գտնենք հետեւեալը.

Մինչև Յունիս 7, ամբողջական մուտք 40,808 տ. 2ս., Բէնքիուի (փրկութեան) դրամ 3,397 տ. 13 ս.:

Նեղելոց յղուած գումարը 25,377 25

Քաղաքական գործոց համար—

Հրատարակութեանց, յանձնախմբոց կազմակերպութեան, խնդիրն Միացեալ Նահանգաց Կառավարութեան և ժողովրդին ներկայացնելու համար 7,515 33

Գործիչներու ամսաթոշակ 3,216 50

Փրկութեան Գործին (Rescue Work) համար 100,000 օրինակ Horrors of Armenia կոչուած տետրակին հրատարակութեան համար 4,539 00

Պատրաստ դրամ 3,557 07

44,205 15

Փրկութեան գործ ասելով, որպէս բացատրուած է վերոյիշեալ տետրակին մէջ, կը հասկացնեն Հայոց գաղթումն ապահով տեղեր կամ երկիրներ:

Այս երկու յատկապէս կազմուած հայախնամ մարմիններէն զատ հանգանակութեան միջոց եղած է նաև Ամերիկեան Պօրտ ընկերութեան գանձապետը, որում յղուած նպաստներու գումարն եղած է 121,737 տոլար. (Այս գումարին 40 հազարը Քրիստոսեան Հէրալտի, The Christian Herald, հանգանակածն է):

Յիշենք նաև թէ Ամերիկա բնակող Հայերն ևս իրենց նեղեալ ծնողաց և բարեկամաց յղած են, Պօրտի գանձապետին միջոցաւ, յընթացի վերջին ինն ամիսներու, 70,000 տոլար: անշուշտ այս չէ բո-

լարը, զի մեզ ծանօթ նիւս ետրքցի հա-
րուստ հայ վաճառական մը, օրինակի հա-
մար, միանուագ յղեց 5,000 տոլար ի նը-
պաստ հայ տառապելոց, իրեն յատուկ մի-
ջոյով:

Ուրեմն Ամերիկայէն թէ բուն Հայերէ
և թէ բնիկներէն, Հայոց ի նպաստ յըղ-
ուած է, կոտորածներէն ի վեր, իր 400,
000 տոլար:

Բայց և այնպէս Հայաստանի մէջ մեր
եղբարք այսօր անտանելի տառապանք կը
կրեն, շատերը հաց չունին, և ոչ սակաւք
խոտով կը կերակրուին:

Պէտք է օգնութեան գործը աւելի
մեծ եռանդով և իմաստութեամբ յառաջ
մղել:

ՎԻՃԱՆԱՅԻ

ՄԻՍԻԹԱՐԵԱՆ ԴՊՐՈՅՐ

Ե Ի

ՀԱՅՅԵՐԷՆ ԼԵՂՈՒՆ

Գեր. Հայր ԱՅՏԸՆԵԱՆԻ յորէլեանին
առթիւ ցաւ կը յայտնէի որ «Քննական
Քերականութեան» բաղմարդիւն հեղինա-
կը չունեցաւ արժանաւոր յաջորդներ որք,
նոյն դիտական ոգով և գործնական նը-
պաստակաւ, շարունակէին ու ամբողջա-
ցնէին նորա գործը: Ինչպէս Այտընեանի
խորամուտ քննութիւնք ոչ սակաւ խըն-
դիրներ պարզեցին ու վճռեցին ի գոհու-
թիւն բանասիրաց, նոյնպէս և այժմ, ե-
թէ գտնուին ման հեղինակութիւն, կարող
կը լինի նմանօրինակ զօրութեամբ պար-
զել և վճռել առկաի մնացած խնդիրներ և
տալ լեզուական միութեան գործին ուժգին
մղում: Զի ոչ ոք կ'անգիտանայ թէ մեր
արդի գրական լեզուի երկուութիւնը յա-
ռաջդիմութեան ծանր քարընդոտն մ'է:
Արեւելեան Հայերէնին և արեւմտեանին
միջեւ խտրին, բառական՝ համաձայնական
և շարադասական, բառական խոր լինելէ
գատ, արեւմտեան ալ բաժնուած է, թէև
ոչ խորապէս, մի քանի դպրոցներու,—
Պոլսեան, Վիեննեան, Վինետիկեան և այլ
բազում պնդատական ոտորաբաժիններու:

Ի բուն սիրոյ հայերէն լեզուի մղեալ՝
փորձեցի «Հանդէսն» բերել ի քննութիւն
կարգ մը գործնական խնդիրներու, և այդ
չարժառիթով փափաք յայտնեցի որ ա-
ռանձին ուսումնասիրութեամբ մը պարզէ
թէ ինչ են Վիեննական Դպրոցին հայերէ-
նին բառական և շարադասական տարբե-
րութիւններն ի պոլսականէն, քանի որ կը
յայտարարէ թէ «երբէք համամիտ չէ»
պոլսեան աշխարհաբարին:

«Հանդէսն» զլացաւ այդ ուսումնասի-
րութիւն որ անչափ հեաաքքրութեամբ
և օգտիւ պիտի կ'արդացուէր:

Երկրորդ անգամ փորձեցի մղել «Հան-
դէսն» ի քննին այդ գործնական խնդրոց՝
առաջարկելով որ ցուցնէ թէ ինչո՞ւ անեմ,
ասեմ գրելու տեղ, որպէս կ'անեն արեւ-
ելեանք և ոմանք յարեւմտեայց և որպէս
ունի մեր հին հայերէնն, որդեգրած է
պոլսեան ձեւն՝ ընեմ, ըսեմ: Այս երկու
բառերն իրրեւ օրինակ կը յիշէի անընդու-
նելի աղաւաղման, և խնդիրն ընդհանրա-
ցնելով՝ կ'աղաչէի որ Հանդէսն «պարզէ
թէ ինքն ինչ օրէնքներու կոթնած՝ սահ-
ման կը գծէ մերժելի աղաւաղմանց և
յարգելի չըջափոխութեանց միջեւ»:

Հանդէսն այս անգամ ալ (Յուլիո) կը
հրաժարի բուն խնդիրն ձեռք առնէ և
հարեւանցի պատասխան մը կուտայ, ան-
համբեր չեչուով, և կ'ասէ «Եթէ աշխար-
հաբար հայերէնի արմատական այբը չի սը-
ղիր, ինչո՞ւ Հայք միշտ կրնալ կրնային կը
գործածէ... Աշխարհաբարն ալ ունի իւր
կանոնները, եթէ ոչ կը ստիպուիք...
սա խօսքը բարեկամս կը մնունէր... պիտի
հասնէի և տեսնէի զիմքը, եթէ կեցողանի գտանէի, պիտի
ճանաչէր զիս: ... Իսկ եթէ ուս. սահայ լե-
զուն սիրուն կ'երևայ ձեզի, գիացէք թէ
նոյն լեզուի հոգին կը պահանջէ որ ասեմ
և անեմ գործածուի, վասն զի ամբողջ
լեզուի construction, զատ հիմանց վրայ է»:

«Հանդէս»ը հոս կը շփոթէ արմատա-
կան և ոչ-արմատական այբերու սղման
տարբեր խնդիրներն, և բոլորովին ան-
տրամաբանական է իւր կողմէն հետեւցնել
թէ մեք, արմատական այբի սղման դէմ
խօսելով, կը ստիպուինք նաև ոչ-արմա-
տական այբերն չսղել և ասել «բարեկամս
կը մեռանէր, են»:

Նաև կը պնդէ թէ անեմ և ասեմ ձեւերը

յատուկ են միայն արեւելեան հայերէնին, իսկ ոչ ուրեք բնիկ են արեւմտեան Հայոց մէջ: Այս կետին վրայ կարող եմ ես, իբրեւ Ակնայ բնիկ, երաշխաւորել իրողութեան թէ՛ յիշեալ քաղաքի գաւառաւորաբառն միայն և միայն անել ձեւը կը ճանաչէ: Եւ կը թողում Հանդէսի խմբագրութեան համաձայնել զայս երևոյթ իւր տեսութեան հետ, կամ գիւր տեսութիւնը՝ այս երևութի հետ:—այսինքն իւր այն տեսութիւնը թէ ուսումնայ լեզուին «հոգին կը պահանջէ որ ասեմ և անեմ գործածուի»: Իմ կարծեօք բուն Հայ լեզուի ճշմարիտ ոգին զայդ կը պահանջէ, և ընել ձեւը անընդունելի աղաւաղում է: Հայերէնի մէջ արմատական ի և ու ձայնաւորներն, երբ բառի մը վերջն են՝ առջեւին ուրիշ բաղաձայնով, կը կորսուին երբ որ բառին վրայ ձայնաւոր գիր մ'աւելնայ, որով իրենց առջեւ եղած բաղաձայն գիրը յաջորդ վանկին կ'անցնի: Այսպէս գիր, գ'րել. մուր, մ'րել: Նոյն պայմանաց մէջ էն ի-ի կը փոխուի. կէս, կիսել, գէր, գիրուկ: Բայց Հայերէն լեզուն, նոյն պայմանաց մէջ, արմատական ա. ե. օ և ո ձայնաւորներն կը յարգէ և կը պահէ անսղեալ. զոր օրինակ. գան, գանել. մատն, մատնել. բեր, բերել. սեր, սերել. խոր, խորին. հօտ, հօտի:

Զի՞ այդ ակնածութիւնը կը լինի այդ ձայնաւորներուն և ոչ ուրիշներուն: Վասն զի, յայտնապէս, տարբեր բառերն նոյնանալով խառնաշփոթուելէ կը պահուին. եթէ ոչ գան և գին արմատներէն պիտի ունենայինք մէկ քայ, զմել. և բեր և բիր արմատներէն՝ քրել միայն, և սէր և սուր արմատներէն՝ սրել միայն, ևն.

Կարելի է հոս լեզուի իմաստասիրութեանը մտնել և հարցնել թէ ինչո՞ւ, եթէ հոմութենէ փախչելու նպատակաւ էր, ա և ե՞ ձայնաւորներն չսղեցին մեր նախահարք, պահելով ի և ու ձայնաւորներն անսղելի: Ասոր պատասխանը, ըստ իս, կըրնանք գտնել, եթէ ձայնաւորներն դասաւորենք ըստ իրենց մեծութեանն ու զօրութեանը: Ա, ե, օ, ո, են մարդկային լեզուին մայր ձայնաւորներն, ար լինելով առաջինը: Ի, ու և ը ձայնաւորներն մանր, փոխ-ձայնաւորներ են, օժանդակ, տեղակալ, եթէ կարող եմ այսպէս ասել, բուն մեծ ձայնաւորներուն՝ երբ հարկ լինի— և այս հարկը կը լինի երբեմն, քաջառօրէ՛մ,

արմատական ա, ե, օ, ձայներուն համար, և աւելի հասարակօրէն՝ երբ ա-ը բառին արմատին չի վերաբերիր այլ ածանցներուն:

Աշխարհարարի մէջ մայր ձայնաւորներն սղեալ են քաջառօրէ՛մ, և ընդհանրապէս այն տեղ ուր միւսնոյն ձայնաւորէն երկու հատ գտնուած է արմատին մէջ. ինչպէս պակամ—պակ'սիլ. պատառ—պատ'ռել. աստառ—աստ'ռել. քաղաք—քաղ'քէն. սովոր—սով'րիլ: Դիտելի է որ և յայսմ՝ երկու ձայնաւորներուն ոչ առաջինը այլ երկրորդը կը սղի. պառակ—պառ'կիլ:

Այս բացառութիւններն լեզուին օրէնքին դէմ հազիւ թէ կը մեղանչեն, վասն զի ուրիշ հատ մը նոյն ձայնաւորէն դեռ կը մնայ բառին մէջ և անոր դէմքն ու ոյժն կը պահէ: Այդպիսի աղաւաղումներն ներելի են, բայց խնդիրն բոլորովին կը փոխուի երբ արմատին միակ մայր ձայնաւորը սղելու չափ յառաջ կ'երթայ աւարագախօս և շաշիաղի գռնհիկը: Այդ է զեղծ, ապօրէն սղում, և անընդունելի: Այդպիսի սղմանց երկու նշանաւոր օրինակներն են ընեմ և ըսեմ բայերը: Առնեմ-ը եղեր է այրեմ, այնեմ և վերջապէս ա-նեմ. ու այժմ ալ կենդանի է այդ վերջին փուլը, որ պէտք է իւր կարճութեան վերջին չափին վերածուած նկատել: Իսկ ընեմ ձեն արմատէն ոչ միայն ը (կամ ո) տառն դուրս կը թողու, այլ և զմայր ա-ը, որ ալ ինքն է բոլոր արմատը, կը վերածէ ձայնաւորներու ամենատկարին՝ ը-ի: Անդրադարձք վայրիկ մը, յարգելի խմբագիրք Հանդիսին, այդ երևութիւնը մը կը թողուք ամենանախակաւ, ամենագործածական բայերէն մէկուն արմատին տեղը. կը մեղանչէք լեզուին օրէնքներուն դէմ:

Այս մասին առ այժմ այսչափ:

Հիմա անցնինք քաջատրութիւն մը տալու մեր այն կարծիքին, որ հարկաւ յոյժ դժպէսի եթէ ոչ յանդուգն երևցած է Հանդիսին, թէ այդ պատուական ամսաթերթի հայերէնն, «իւր բոլոր լաւ յատկութեամբք հանդերձ, չէ բաւական գուհացուցիչ»:

(ա) Համանիշ բառերու երանգներն ըստ բաւականին չի զանազաներ:

Հանդէսն կ'ասէ «ըսել է թէ շեռուցանելով թոյնին զլխաւոր յատկութիւնը կը փոխուի: Թունաւոր հեղուկ մը կը մնայ որ միայն տեղական և շնչին վնաս կ'ընէ» ու-

րեմն բնութիւնը տակաւին թունաւոր է, չէ փոխուած (change,) այլ այլալաւած (altere) : փոխութիւնը՝ կը ցուցնէ բոլորովին ուրիշ բանի վերածուիլ կամ ուրիշ բանի մը իւր տեղն անցնիլ : Մինչ այլալաւել բառը մասնական կամ աստիճանական տարբերութիւն կը ցուցնէ նոյն իրին վրայ :

«Ինչէ՞նք այս անձամ միւթը այսպիսի վընասակար յատկութիւն մը կ'ունենայ» : Որովհետեւ խնդիրն օձի թոյնին, «Հեղուկի» մը վրայ է, որ գեղձէ մը կ'արտադրի, աւելի ճիշդ կը լինէր «Հիւթ» կոչել : Նիւթ՝ matiere կը նշանակէ, ամենընդարձակ առմամբ :

«Դժուարին չէ այս ցուցման անյարիր և անկապակցեալ ըլլալը ցուցնելը» : Յարիր, յառնեմի՝ երկայն արմատն է, «անյարիր» կը նշանակէ առանց յառնելու կամ ոտքի կանգնելու հնարաւորութեան : Գ. օ. անյարիր անկումն : Իսկ յարիմի՝ արմատն է ՅԱՐ, որ անընդհատ շարունակութեան միտքըն կուտայ, և իբրեւ մակբայ ալ կը գործածուի, յար փոփոխիլ են : Ուրեմն «անկապակց» միտքն տալու համար պէտք է առնել ԱՆՅԱՐ, որ հին գրքերու մէջ գործածուած ալ է այդ իմաստով :

Գանք համաձայնական կամ շարադասական թերութիւններու :

(բ) Զ նախդիրը, հայցականի վրայ, բաւական յաճախ չի գործածեր :

«Արդեօք բոլոր լեզուներն կամ աւելի լեզուաբուններն՝ որոնց վերածած է արդի լեզուագիտութիւնը, լեզուները իրենց մէջ լուծուած մի միակ լեզուի մը շառաւիղներն են» :

Խօսքը աւելի յստակ կը լինէր եթէ գրէր «... որոնց վերածած է արդի լեզուագիտութիւնն զլեզուները, իրենց մէջ» են : Այդ «Զ» թացականութիւնը պատճառեղած է որ գրաշարը սխալելով գրած է ստորակէտը «լեզուներն» բառէն առաջ, փոխանակ վերջը դնելու, և ապա հեղինակն իսկ չէ նշմարած կետագրական սըխալը, որոյ շնորհիւ «շառաւիղներն են» բային տէր բային կը կարծուի երկրորդ անգամ յիշուած «լեզուներն» փոխանակ բուն տէր բային (լեզուաբուններն) :

Աւելորդ կը համարիմ այս կարգէն ուրիշ օրինակներ յիշել :

(գ) Ամփոփիչ, դերբայաչատ, յետագարձ շարադասութիւնը, որ արեւմտեան հայերէնի գլխաւոր արտոն է, բաւական կը տիրէ վիեննական Դպրոցին մէջ ալ :

Հոս դիտումս չէ յարուցանելայն վէճը թէ շարադասական այդ կարգ բոլորովին տաճկերէնի ազգեցութեան կը պարտինք թէ հին հայերէնի մէջ ալ կար :

Այդ զիարդ և իցէ, մեք պէտք է նըկատենք խնդիրն գործնական տեսակետէն և ընդունինք թէ գրական, գիտական մըշակութեան լեզուի մը համար շարադասական վերոյիշեալ կերպը անպատեհ է : Պարզ և կարճ խօսքերու համար, ինչպէս են ռաբկին ընտանեկան և մշակին դաշտային խօսքերը, ամփոփիչ կերպը կրնայ յստակ լինիլ, բայց այդ կադասարին համեմատ ձեւել ու կերտել այն բարդ և մշակուած նախադասութիւններն որք հարկաւոր են իմաստասիրական, գիտական, գրագիտական բացատրութեանց համար, կը լինի չարաչար և անյաջող փորձ : Արդէն այդ ճշմարտութիւն գրեթէ ընազդօրէն զգալի եղած է մեր գրողներուն, որք հարկադրուած են թրքական շարադասութեան խտտորիլ և ֆռանսական կարգին հետեւիլ չափով մը : Սակայն այդ չափը դեռ հեռի է գոհացուցիչ լինելէ : Այս մասին լուրջ քննութեանց և կարեւոր բարեփոխանց տեղի կայ :

Յիշենք Հանդէս Ամսօրեայէն քանի մը օրինակ ի բացատրութիւն :

«Առաջին վայրկեանին մէջ սրտին նուաղած գործողութիւնը վերստին կը կենդանանայ» : Առաջին վայրկեանին մէջ նուաղած, թէ առաջին վայրկեանին մէջ վերստին կը կենդանանայ : Հարկաւ առաջինն է միտքը, բայց վայրիկ մը կրնայ ընթերցողին միտքը տատամսիլ : Աւելի յստակ կը լինէր եթէ ասէր— Սրտին գործողութիւնը, որ առաջին վայրկեանին մէջ նուաղած էր, վերստին կը կենդանանայ :

«Օձի թոյնին արեան և ջրաց կեղրոնին գեղձերուն վրայ ըրած ազդեցութեան դէմ տակաւին դեղ չէ գտնուած» : Սեռականներու ի՞նչ խիտ բազմութիւն : — Տակաւին դեղ չէ գտնուած այն ազդեցութեան դէմ գործած թոյնը յառաջ կը բերէ ջրաց կեղրոնին գեղձերուն և արեան վրայ :

«Մենք ալ չենք տարակուսիք ամենեւին մեր նախնեաց շատ հին ժամանակները վիպական երգեր ունենալուն : Բայց Մովսէսի Խորենացոյ մեզի հասուցած հասկոտորներուն համար արդէն մեր կարծիքն յայտնած ենք, թէ արտաշիսեան վիպասանութեան մասունքն են» :

Սապէս կը բարեփոխենք այդ տողերը—
Մենք ալ չենք տարակուսիր ամենեւին թէ մեր մալխնիք շատ հին ժամանակները վիպական երգեր ունեցած են (ոչ թէ ունենալուն, որ ներկայի միտք կուտայ)։ Բայց այն հատակոտորներուն միատամբ զորս Մովսէս Խորենացի մեզի հասուցած է, յայտնած ենք արդէն մեր կարծիքը, թէ արտաշիտեան վիպասանութեան մասունքն են»։ Շարադասութեան այս վերլուծական կերպը աւելի պայծառ կերպով կը բացատրէ պարբերութեան երկու մասերուն հակադրութիւնը, այսինքն, թէ Հայք ունեցած են երգեր ի յոյժ հնուց, բայց այն կտորները որք Խորենացւոյն ձեռքով մեզի հասած են, նուազ հիներէն են։

«Ֆէթթէր» Հայոց հիմ երգերուն առաջին անգամ մտադիր և զանոնք զմահատող էմին գիտնականն եղած գիտէ։»

Այդ խօսքի շարադասութիւնն ալ բարեփոխելի է։ Ընթերցողը կրնայ կարծել թէ «Հայոց հին երգերուն առաջին անգամ մտադիր և զանոնք զնահատող» բառերը Ֆէթթէրի նըկատմամբ են, և այս հաւանական ըմբռնումը կը սրբագրուի յետոյ երբ խօսքին ամբողջը կը կարդայ կը լսենք։

Ուրեմն աւելի կատարեալ շարադասութիւնը կը լինի հետեւեալն.— Ֆէթթէր զէմին գիտունն կը կարծէ առաջինն եղած լինիլ յուսումնասիրել և զնահատել Հայոց հին երգերն։

Եւ այս է Ֆռանսական և անգլիական շարադասութեան շատ նման.—

Ֆռանսերէն.— F. croit le savant Emin avoir ete le premier a etudier et a apprecier les anciens chants des Armeniens.

Անգլիերէն.— F. believes the erudite Emin to have been the first to give attention to, and appreciate the, ancient Armenian songs:

Դիտել պէտք է թէ Ֆռանսական կամ անգլիական շարադասութեան կատարելապէս նման չէ այն Հայերէնը զոր նախամեծար կը համարինք։ Հայերէնը սակաւին Հայերէնի բնիկ յատկութիւնը կը պահէ՝ եւրոպականին յատկ կանոնաւորութիւնը զգենլով հանդերձ։

Նաև «գիտէ» բային տեղ «կը կարծէ» գրինք։ Քանի որ Ֆէթթէր սխալեր է, քանզի էմին չէ եղած առաջինը։ Արդի գիտական ժամանակներս կը պա-

հանջեն որ զիտեմ բայն գործածուի աւելի յարգանքով և իւր ճշգրիտ իմաստովը։

Առնունք այժմ մեծկակ կտոր մը
ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅԻ ԽՕՍՔԵՐՆ

ԻՆՉՊԷՍ ՈՐ ԵՆ

(Ստորագծութիւնը մերն են)

Շատ ցաւալի է որ այնպիսի գիտնականներ՝ որոնց գիտական հետազոտութեանց շատ բան պարտական ենք, երբեմն այլևայլ նախապաշարումներով բոլորովին անհիմն ենթադրութեանց մէջ կը գլորին։ Ստուգիւ այս տեսութիւնն է պատճառ, որ Ֆ. Միւլլէրի Հայերէնի նկատմամբ ըրած գրեթէ բոլոր խուզարկութիւններն, ըլլա՛յ Հայ լեզուին, ըլլա՛յ Հայ գրի գիւտին նկատմամբ, նորագոյն քննութեանց առջև չունեցան այն հաստատութիւնը, զոր կ'ունենային եթէ շատ անգամ սխալ սկզբունքէ մ'առաջնորդուած չըլլային։ Ի՞նչ եղաւ հետևութիւնը. Պրոֆ Հիւբշմանի մը Հայերէն լեզուին նկատմամբ ըրած գիտողութիւնները տապալեցին ըստ մասին միլլէրեան ենթադրութիւնները. բայց ասոր վրայ ուրիշ տեղ. Յայժմ իբր խնամի չճանչցուած լեզուներուն տարբերութիւնն՝ Ֆ. Միւլլէրին կարծածն պէս «անհակառակելի կերպով ըլլաւոր» չէ։ Լեզուագիտութեան մէջ ուրիշ երեւելի հեղինակութիւններ անկարելի չեն համարիր, որ այն լեզուներն՝ որոնք ամենեւին խնամի չեն երևար, միևնոյն ծագումը չունենան։

(Հ.Ա.Մ., փետր. 1896. երես 46, երկրորդ սխանակի վերջին մէկ երրորդը)

ՆՈՅՆ ԽՕՍՔԵՐՆ ՈՐՊԷՍ ՊԷՏՔ Է

ԼԻՆԵԻՆ ԸՍՏ «ՀԱՅՔԻ» ԿԱՐԾԵԱՑ

Շատ ցաւալի է որ այնպիսի գիտուններ (savants)՝ որոնց գիտական (scientifique)* հետազոտութեանց շատ բան պարտական ենք, երբեմն այլևայլ նախապաշարումներէ առաջնորդուելով, կը գլորին բոլորովին անհիմն ենթադրութեանց մէջ։ Ստուգիւ այս (ոչ քննադատին այս տեսութիւնը, այլ տեսութեան առարկայ եղող երևոյթը, այսինքն նախապաշարումներէ առաջնորդուելն) է պատճառ, որ Ֆ. Միւլլէրի գրեթէ բոլոր հալազիտական խուզարկութիւնները (աւելի ճիշտ՝ խուզարկութեանց արդիւնքը, եզ-

* Անասուն, զեռուն, ևն. ունինք իբրեւ գոյական. իմացական, բարոյական ևն. ունինք իբրեւ ածական։

րակացութիւններն,) ԸԼԼայ հայ լեզուի՛ն, ԸԼԼայ հայ գրի գիւտի՛ն նկատմամբ*, նորագոյն քննութեանց առջեւ չուենցան այն հաստատութիւնը, զոր կ'ունենային եթէ շատ անգամ սխալ սկզբունքէ մ'առաջնորդուած չըլլային: Ի՞նչ եղաւ հետեւութիւնը. հայերէն լեզուի մկատմամբ Պրոֆ. Հիւպլմանի (մը աւելորդ է, եթէ Հիւպլման անծանօթ կամ գուցէ անգիտ չէ) դիտողութիւնները ատպալեցին ըստ մասին զմիւլլէրեան ենթադրութիւնները. բայց ասոր վրայ ուրիշ տեղ: Ցայժմ իբր խնամի չճանչցուած լեզուներուն տարբերութիւնն՝ «անհակառակելի կերպով լուսաւոր» չէ, որպէս Փ. Միւլլէր կը կարծէ: Լեզուագիտութեան մէջ երկեւի ուրիշ հեղինակութիւններ անկարելի չեն համարիր, որ այն լեզուներն՝ որոնք ամենեւին խնամի չեն երևար, միւսոյն ծագումն ունենան:

Թէպէտ չարադասական եղանակին նկատմամբ իմ տեսութիւնը չկրցի լիովին ներկայացնել այսօրուածի մէջ, կ'ուզեմ թիւրիմացութեան մը առջեւն առնուլ, այսինքն, պէտք չէ կարծել թէ Ամսօրեայ Հանդիսին լեզուին մէջ սխալներ որոնեցի: Սխալները պատահական են և ամեն գրչէ ալ կ'եննեն երբեմնակի: Խընդիրը ուրիշ է, այսինքն արդի հայերէն գրական լեզուին կատարելագործումը, այնպէս որ եւրոպական մշակուած առաջնակարգ լեզուաց քով կարենայ դուրի իբրեւ յոտակ, գիտական, կանոնաւորուած լեզու: Ես կը պնդեմ թէ հայերէնի չարադասութիւնը այնպէս լինելու է, և կարող է լինիլ, որ ըմթերցողին մկտքը ըմբռնէ զգրողին մկտքը այնքան քիչ յոգնութեամբ որքան հմար է, առանց վայրիկ մ'իսկ տատամուելու երկու հնարաւոր հասկացողութիւններու միջեւ, այլ ընդ կարդալն հասկնայ հետզհետէ կարդացուած մասերը:

Ուրեմն ինչ որ Հանդէս Ամսօրեայի լեզուին նկատմամբ դիտեցի, չէ անոր ա-

* Հանդէսին շեշտողութիւնը կատարելապէս ուղիղ չէ յասելն. «ԸԼԼայ՝ հայ լեզուին, ԸԼԼայ՝ հայ գրի գիւտին նկատմամբ», որպէս պիտի տեսնէք եթէ մկտքը լինէր «ԸԼԼայ հայ լեզուի գիւտին, ԸԼԼայ հայ գրի գիւտին նկատմամբ»: Ուստի անտարբեր ԸԼԼայներուն վրայէն շեշտը տեղափոխեցի և գրի «ԸԼԼայ հայ լեզուին, ԸԼԼայ հայ գրի գիւտին նկատմամբ» որ ամենեւին անդի շտար շիթթութեան:

ռանձին թերութիւնը, այլ արդի հայերէնին թերութիւնը: Շատ աւելի ասելիք կ'ունենայի եթէ ուրիշ Լրագիր մը կամ հանդէս մը քննէի:

Կ'աւելցնեմ նաեւ թէ Հայր Այտնեանի լեզուին մէջ այդ շրջուն և երկար չարադասութիւնը ամենեւին տիրող չէ. «Քննական Քերականութեան» մեծ հեղինակը զարմանալի կերպով յոտակ աշխարհաբար մը և խորապէս մշակուած լեզու մը գործածեր է ասկէ երեսուն տարի առաջ: Չեմ կարծեր թէ Հանդէսը բաւական հաւատարմութեամբ կը հետեւի Այտնեանի ուղղութեան: «Հայք» աւելի ճշմարիտ աշակերտն է Այտնեանի:

Եթէ նիւթերու առատութիւնը ներէ, այս խնդրոյն կը վերադառնայ «Հայք» մօտակայ թիւերէն միոյն մէջ:

ԵՅԼ ԵՒ ԵՅԼՔ

ԿՈՏՈՐԱՅ ԶԱԿՆ

Լոնտոն, Յուլիս 16. — «Քրօնիքը» վաղը հեռագիր մը պիտի հրատարակէ Կ. Պոլսէ ծանուցանող թէ 400 հայեր ջարդուած են Ահմայ մէջ, Տիարալէքիւրի շրջանում: Քաղաքն կ'ըզոպտուած է: Կոտորածին թուականը տրուած չէ:

ԿՈՏՈՐԱՅ Ի ՆԻՔՍԱՐ

Կ. Պոլիս, Յուլիս 20. — Վերջերս ծանր խռովութիւններ տեղի ունեցան ի Նիքոսար, Սեբաստիայ Նահանգում, ընդմէջ թրքաց և Հայոց: Առաջիններէն 60 և վերջիններէն 340 հոգի սպաննուած են:

Վիեննա, Յուլիս 23. — Թեսաղոնիկէհոս ոտացուած Լրոյ մը համեմատ՝ թրքական զօրքը մարտ մղած են Մակեդոնիոյ ապստամբաց դէմ ի Տէմիր Հիւար, յորում ապստամբք կորուսեր են 500 մարդ: Թրքերն ապստամբներուն ետեւէն փախ են գրեր, որք փէրինի լեռներն սպաստաներ են:

(Տէյլի Նիւզէն) — Դեսպանատուներէն ոմանք անստորագիր նամակ մ'են ստացեր ուշագրութիւն հրաւիրող Հայոց անհանդուրժելի և յուսահատական կացութեան, որք կը յայտարարեն իրենց սրտումը թր-

քական բռնապետութենէն ազատուելու և կը նետեն իրենց հարստահարիչներուն վերայ բոլոր պատասխանատուութիւնը ամենայն պատահականութեանց։ Այս նամակը, թէպէտև անանուն, ապաւորութիւն մ'է յառաջ բերել դիւանագիտական շրջանաց մէջ, մանաւանդ որ անցեալ չաթու մէջ աճեալուն յուզմունք մը անսնուած է Հայոց մէջ։ Կ'ասեն թէ Սրբազան Իզմիրլեան, Հայոց պատրիարքը մտադիր է հրաժարելու։

Աթէնք, Յուլիս 24.— Աքրօփօլիս լըրագիրը կ'ասէ թէ նիաուսթայում, ի Մակեդոնիա, կռիւ մ'է եղած խումբ մը յոյն ապստամբելոց և ութսուն և ութ թուրք զօրաց միջեւ։ Թրքերէն չորսը խոյս տուեր են, 18 բռնուեր են և 61ը սպաննուեր։

Զուիցերիոյ Նէօլաթէլ քաղաքի բողոքական եկեղեցիներն ի նպաստ հայ սովետոց հանգանակեր են 687 անգլիական լիրա և յղած են լոնտոնի Յանձնախմբին։

Շիքակոյէն կը գրեն մեզ.

Հայր Տէրունեան այս կողմը այցելութեան ելած է և Հայերուն մէջ հանգանակութիւն կ'անէ ի նպաստ Հայաստանի տառապելոց։ Ամբողջ գումարը այս է.—

Շիքակոյէն	210	տոլար
Հէմմընտէն	155	„
Ուօքիլընէն	370	„
	735	

Յ. ԲԸԼՂԱՔԵԱՆ

Գանձապետ Հայոց Ա. Միութեան։

Շնորհակալութեամբ ստացած ենք քառասուն տոլար, Ճավայի Պաթավիա քաղաքին Հայոց նպաստն «Հայք»ի համար, ի ձեռն Տիար Գ. Գ. Գառպարեանի։

Կը խնդրենք բոլոր երկիրներու մեր բաժանորդներէն անյապաղ մեզ հասցնել իրենց դեռ անվճար բաժանորդագներն 1896 թուականին համար։

ՀԱՅՔԻ ԲԱԺԱՆՈՐԴԱՅ ՅԱՄԵՐԻԿԱ

Կը խնդրենք որ անոնք որ Հայքի այս տարուան երկրորդ վեցամսեայն վճարած չեն դեռ, վաղ ընդ փոյթ վճարել հաճին։

Հայքի ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ բաժանորդներէն ոչ մին այս տարի վճարած է։

Ակնայ կոտորածին վերաբերութեամբ մանրամասնութիւնք չեն հաւած դեռ Հայ-

քի խմբագրին որ դառն մտաւանջութեամբ կը սպասէ լրոյց։

Պուլկարիոյ վառնա քաղաքին մէջ ԻՐԱՆԻՆԻՔ անունով շարաթաթերթ մը կը հրատարակուի այժմ չորս երեսէ բաղկացած, մէկ կամ երկու երեսը հայատառ թրքերէն լինելով։ Տարեկան բաժնեգրին է երկու տոլար։

The Haunting Horror in Armenia
or who will be damned for this

է անունը մի նոր անգլիերէն տետրակի, 62 երեսէ կաղկացած, որ Յունիսի մէջ ի լոյս ելաւ յԱնգլիա, հրատարակութեամբ Ու. Թ. Սթէտի։ Ժողովրդի երիտասարդ դասուն ուղղուած զօրաւոր գրութիւն մ'է սա, յորում կը ցուցուի Անգլիոյ պատասխանատուութիւնը Հայոց նկատմամբ։

Նիւ Եորքի տխրահռչակ «Հէրալտ» թերթն անցեալ օր կը ծանուցանէր թէ Սուլթանը Լոնտոնի, Պէրլինի, Բարիլի մեծ լրագիրներուն կաշառք է յղեր նորէն, և դժգոհ կերպով մը կը յայտարարէ թէ Հէրալտը դուրս թողուած է։ Այս դէպքէն ի վեր Հէրալտ տառնց խնդրութիւնը հրատարակել սկսած է հակաթրքական լուրերը։

Պետրոս Եղազարեան անուն երիտասարդ մը, Խարբերդու իջմէ գիւղէն, աստիկ քանի մը ամիս առաջ այս քաղաքէս գնաց ուրիշ քաղաք գործի պատճառաւ։ Վերջի անգամ լսեցինք որ Ալպընիի մէջ կը գործէ եղբի և հիւանդացի ու հիւանդանոց է գացեր։ Ու անկից ալ աղեկցած էր գրեց և ալ լուր չունինք ուր ըլլալը։ Ուստի Հայքի ազնիւ ընթերցողներէն կը խնդրուի որ եթէ մէկը գիտէ Պ. Եղազարեանի ուր ըլլալը թող հաճի ստորագրեալ հասցէին գրել։

H. M. Cooyumjian,
1003 P. O. Box, New Britain,
Conn.

Ed. LEGOLL
ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ. Էվինիու Նիւ Էորք
26դ և 27դ. Փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

Հասցե

Editor of "HAIK" 341 West 23d St.,
NEW YORK,
U. S. America.

Կամ Redaction de la Revue "HAIK" ևն

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան բաժնեգրին է
ամեն երկրաց համար
երկու տարի կամ տասն ֆրանք
կանխիկ

Ա Ռ

ԲՆԺԱՆՈՐԴՍ "ՀԱՅՔԻ,"

Բաժանորդագրներն կրնան յղուիլ Հե-
տեևալ կերպերով:

Ամերիկեան տղար թղթագրամ նա-
մակի ծոցով:

Ամերիկեան փոսթ-սթէմփ նամակի
ծոցով:

Մընի Օրտըր.

Օտար երկիրներէն դրամ յղելու Հե-
տեևալ կերպերն կան.

Մընի Օրտըր.

Քրէտի Լիօնէի փոխանակադիր

Ֆռանսական դէմպո-բօսդ.

Դրամ պարունակող նամակներն ա-
պահովադրել պէտք է:

Կը խնդրենք յատկապէս որ յիշեն
Հայք ուղղներն թէ բաժանորդագրու-
թեան մեր պայմանն է կանխիկ վճարում.

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ
մանտա տը փոսթի միջոցաւ խմբագրութեա
նըս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օ-
ֆիսին Station E (Եղ ճիւղ) ին ձեռքով զայն
մեզ հասցունելու հրահանգ տան իրենց
քաղաքի թղթատան: Այսպէսով մեծ
գիւրութիւն ընծայած կը լինին մեզ:

BUSH & Co.

Պ Ո Ւ Շ Ե Ի Ը Ն Կ.

(Հաստատեալ ի 1849)

65 Front St.,

Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին

և չափաւոր գնով

FACTS

ABOUT

ARMENIA

ԻՐՈՂՈՒԹԻՒՆՔ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Այս է անունն անգլիերէն տետրակին
որ Հ. Հ. Դաշնակցութեան կողմէն հրատա-
րակուեցաւ:

Տետրակն կը պարունակէ կլատսթոնի
մեծ ճառն խօսեցեալ ի Չէսթըր, և Տիլօնի
յօդուածն՝ Բօնթէմփորէրի Րիվիւէն ար-
տատուած: Այս յօդուած մինչև ցարդ
Հայոց վերայ գրուածներուն ամենազօրա-
ւորն և ամենակատարեալն է, զոր կարգա-
ցող օտարական մի, որքան ալ գուլ խղճի
տէր լինի կը կատղի թուրք հառափարու-
թեան դէմ: Հայրենակիցք պէտք է փու-
թան տարածել այս տետրակ օտարակա-
նաց մէջ:

Դին օրինակին է 20 սէնթ: Առ նուա-
զն 50 օրինակ մէկէն գնողին կը արուի
15 սէնթէն:

Դիմել ՀԱՅՔԻ խմբագրատունն:

T. HENRY DEWEY,

ՓՈՐՉՍՈՒՈՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՓԱՍՏԱԲԱՆ

Եւ իւր Օգնակաճ

SARKIS C. KEBABIAN,

ՕՐԷՆՍԴԵՏ

Կը հոգամք քաղաքային և միջազգա-
յին դատեր: Կուտամք օրինական խրատ:
Կրնայ ամեն ոք մեզ դիմել գործոյ հա-
մար կատարեալ վստահութեամբ: Հարկ
է, իւր օգտին համար, որ դիմողն առա-
ջուց յստակ որոշէ ասելիքն և իւր հետ
միատեղ բերէ հարկաւոր թղթեր:

ՉՏիար Բէպապեան անձնապէս տես-
նելու լաւագոյն ժամանակն է ժամ 1—5
յետ միջառուր:

Պաշտօնատեղի և Հասցե,
48 Wall St., New York, N. Y.

